



ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՆՔԵՐՈՒ ՄԱՍԻՆ ԿՈԹՈՂԱՅԻՆ ՀԱՏՈՐ ՄԸ՝ «ՀԱՅ ՎԱՆՈՐԱՅՔ»

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հրատարակչատունը այս օրերուն հրապարակ հանեց հայ եկեղեցական ճարտարապետութեան ու պատմութեան համար կենսական կարևորութիւն ներկայացնող հատոր մը, որ Կեսարիոյ երբեմնի Առաջնորդ Տրդատ եպս. Պալեանի «Հայ վանորայք» գործն է: Տրդատ եպս. 19-րդ դարավերջի ու 20-րդ դարու սկիզբներու մտաւորականներէն մէկն է, որ զոհուած է 1922-ի Իզմիրի դէպքերուն: Իրեն հետ միասին զոհուած են իր արժէքավոր աշխատասիրութիւններն ու ձեռագիրները:

Պալեան եպիսկոպոս իր կենդանութեան օրերուն ամենուրեք շրջելով ու ականատեսի վկայութիւն բերելով՝ նկարագրած էր մեծ թիւով վանքերու ու եկեղեցիներու այդ շրջանի վիճակը հայաբնակ վայրերու տարածութեան վրայ: Իր աշխատանքին առաջին մասը հրատարակուած էր 1914-ին Իզմիրի մէջ, բայց պարագաներու բերմամբ գրքին ցրուումը եղած էր անկատար, ու գիրքերը հաւանաբար բնաջնջուած էին տակաւին առանց գործածուելու, այս պատճառաւ ալ գործը գրեթէ անգտանելի էր: Արշակ Ալպոյաճեանի, Համազասպ Ոսկեանի նման պատմաբաններ օգտագործած էին Պալեան Սրբազանի ուսումնասիրութիւնները եւ կերպով մը միջնորդ դարձած էին Պալեան եպիսկոպոսի ուսումնասիրութիւններուն եւ ընթերցողներուն միջեւ: Այժմ Մայր Աթոռը վերջապէս հրատարակած է թանկարժէք հատորը, զայն խմբագրելու աշխատանքը յանձնելով Երեւանի Պետական Համալսարանի Պատմութեան ֆաքիւլթէի աւարտականներէն Կարինէ Աւետեանի: Դուրս եկած է հոյակապ հատոր մը, որու շնորհիւ հայոց վանքերու ու եկեղեցիներու պատմութիւնը ուսումնասիրողներ այսուհետեւ իրենց տեղեկութիւնները պիտի քաղեն ուղղակի աղբիւրէն, եւ պատիւ պիտի ընեն հեղինակին:

Կարինէ Աւետեան, որ ներկայիս կ'աշխատի Հայաստանի Գիտութիւններու Ակադեմիայի Արեւելագիտութեան էնսթիթիւի մէջ, բովանդակալից իր ներածականին մէջ կը ներկայացնէ հեղինակն ու գործը, կը պատմէ թէ ինչպիսի հանգամանքներով է որ Տրդատ եպիսկոպոս սկսած է աշխատիլ այս նիւթին վրայ, եւ ո՞ր թերթերուն մէջ հրա-

տարակած է իր ուսումնասիրությունները: Գիրքին մեջ կը տողանցեն վանքեր Էնկիրին, Գայսերին, Սվազեն, Եղոկիայեն, Շապին Գարահիսարեն, Ամասիայեն, Կիրինեն ու Տիվրիկեն, Տրապիզոնեն, Կիւմիշհանէն, Գոնիայեն եւ Կարինեն, Բաբերդեն, Երզնկայեն ու տակաւին ինչ ինչ տեղերէ, հարիւրաւոր վանքեր, յարակից մանրամասնություններով: Պալեան Տրդատ եպիսկոպոս իր գիրքին մեջ հաւաքած է ինչ որ կրցած է հաւաքել իւրաքանչիւր վանքի մասին: Ոմանց մասին երկար նկարագրականներ կան, ոմանց մասին պարզապէս կարճ վկայություններ: Բայց պատկառելի ցանկ մը կայ մեր ձեռքին մէջ: Եւ ասիկա անուններու տողանցք մըն է, որ յարգանք ու ցաւ կը յառաջացնէ միաժամանակ, որովհետեւ մարդ նախ կը զարմանայ վանքերու առատութեան ու անուններուն վրայ, ապա ցաւ կը զգայ անոնց անհետացած կամ հիմնովին վնասուած ըլլալուն վրայ: Եւ ասիկա նիւթ մըն է, որ ինչպէս իր ներածականին մէջ ալ դիտել կուտայ Կարինէ Աւետեան, մօտէն հետաքրքրած է օտար հեղինակներն ալ, որոնք կը սիրեն ուսումնասիրել Անատոլիոյ տարածքին վրայ հայկական յուշարձանները եւ այս նիւթի շուրջ յօդուածներ կը հրատարակեն գիտական օտար պարբերաթերթերու մէջ: Հատորը ունի ծանօթագրություններու լայն բաժին մը: Ներածականն ու ծանօթագրութեան բաժինները ինքնին առանձին հատոր մը կ'արժեն բնականաբար: Եւ հատորին վերջաւորութեան ալ դրուած են արդի ժամանակներու լուսանկարներ, որոնց հեղինակն է Հրայր Բազէ: Գիրքը մասնաւոր կարեւորություն կը ստանայ նաեւ անով, որ վանքերու պատմութեան առընթեր կը ծանօթացուին մեծ թիւով հոգեւորականներ կամ առաջնորդներ, որոնք Իզմիրի մէջ կամ այլուր պաշտօնավարած են զանազան շրջաններուն եւ անուն մը թողած են մեր վանքերու պատմութեան մէջ: «Հայրենագիտական» շարքէն հրատարակուած այս առաջին հատորին կը թուի թէ պիտի յաջորդեն ուրիշներ ալ: Մեր գնահատանքը կը յայտնենք Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հրատարակչատան, մանաւանդ այս թանկագին հատորը խմբագրող Կարինէ Աւետեանին:

«ՄԱՐՄԱՐԱ», 30 հոկտեմբեր, 2008 թ.